Սոնա Մելիքսեթյան

Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ

Մագիստրատուրա 1-ին կուրս

Հասելթի համալսարան (Բելգիա)

2020թ, փետրվարի 10. մոտավորապես 6 ամիս առաջ այս օրը ես մուտք գործեցի կյանքի մի նոր փուլ։ Այս օրվանից սկսած ամեն ինչ պետք է փոխվեր. սկսվեցին անմոռանալի և հիշարժան օրերը։ Առանց չափազանցնելու կարող եմ նշել, որ Հասելթի համալսարանը Եվրոպայի լավագույն համալսարաններից մեկն է։ Մեզ ընդունեցին այնտեղ գրկաբաց և օգնեցին ցանկացած հարցով։ Միջավայրին ադապտացվելը բավականին արագ ստացվեց, որորվհետև շրջապատված էինք հոգատար և կարեկցող աշխատակիցներով։ Տեղացի ուսանողները միշտ պատրաստակամ էին աջակցել թե՛ ակադեմիական կյանքում, և թե՛ առօրյա խորհուրդներով։ Ինձ բախտ վիճակվեց ուսանել լավագույն դասախոսների ղեկավարության ներքո, սովորել ավելին և հարստացնել գիտելիքների պաշարը։ Հատկապես ուշադրության է արժանի Հասելթի համալսարանի կողմից դասերի անցկացման պրակտիկան, երբ ուսանողները խմբերի էին բաժանվում՝ ընդգրվելով միևնույն խմբում տեղացի այլ ուսանողների հետ, որոնց հետ աշխատելով գիտելիքի փոխանցման պրոցեսը ավելի էր

հեշտացվում և հետաքրքրանում։ Ինտերակտիվ խաղերի, պրեզենտացիաների, խմբային նախագծերի արդյունքում ձեռք բերեցի նոր ընկերներ և միասին անցկացնելով դասապրոցեսները, կարողացանք զարգացնել թիմային աշխատանքի հմտությունները։ Համարում եմ, որ Հասելթի համալսարանում 1 կիսամյակ սովորելը շրջադարձային եղավ իմ կյանքում։

Հաջողության պատմության մասին խոսելը դեռևս շուտ է այս պարագայում, որովհետև կարծում եմ որ գիտելիքի մեջ ցանած սերմերը ինչ-որ ժամանակ անց նոր պետք է բերք տան։ Այժմ վստահ եմ, որ յուրաքանչյուր ուսանող, գոնե մեկ անգամ, պետք է սովորի դրսում, դուրս գա իր հարմարավետության միջավայրից։ Արդեն իսկ մեծ հաջողություն է այս ծրագրի մի մասնիկը լինելը, որովհետև այն տվեց ինձ անկախություն, ազատություն և պատասխանատվության զգացողություն։ Շատ կցանկանայի ուսումնառության ընթացքում կատարել կամավորական աշխատանքներ ևս, սակայն համավարակի տարածման արդյունքում մեր շարժունակությունը սահմանափակվեց և ստիպված էինք ինքնամեկուսանալ 3 ամիս։ Դասերը շարունակվեցին օնլայն՝ ոչնչով չզիջելով կամպուսում անցկացրած դասապրոցեսներին։ Բայց միևնույն է, բոլորս կարոտում էինք մեր համալսարանական կյանքը։ Քննությունների ընթացքում, լարվածությանը զուգահեռ, անչափ ուրախ էինք, որ կրկին կտեսնենք մեր ընկերներին (թեկուզ հեռավորություն պահպանելով, թեկուզ դիմակով)։

Գիտեմ, որ այս շրջանի ուսանողների պատմությունները տարբերվելու են մնացած բոլոր տարիներից, բայց ամեն դեպքում արդեն իսկ հաջողություն էր ինձ համար Հասսելթի համալսարանում նոմինացվելը և նույնիսկ համավարակի պայմաններում դասերն անցկացնելը։

Սասուն Մինասյան

Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ

Մագիստրատուրա 1-ին կուրս

Հասելթի համալսարան (Բելգիա)

Լինել Էրասմուսի մասնակից և ներկայացնել քո երկիրը հյուրընկալող բուհում նշանակում է պատրաստ լինել հանդիպել մի շարք նախատեսելի ու աննախատեսելի մարտահրավերների, պատասխանատվությունների, առանց որոնց միգուցե չկարողանաս լիովին օգուտ քաղել ծրագրից։ Սկզբից ևեթ, ինքս ինձ համար կարգախոս սահմանեցի. դուրս գալ հարմարավետության գոտուց և մտածել «արկղից դուրս»։ Սրանք այն նախապայմաններից են, որ, կարծում եմ, Էրասմուսի յուրաքանչյուր մասնակից կարող է հաշվի առնել իր հաջողության երթուղին պլանավորելիս։

Սովորելով Եվրոպայի բարձրորակ և մրցունակ կրթական ծրագրերով առաջնորդվող համալսարաններից մեկում՝ Բելգիայի Հասելթի համալսարանում՝ ես ձեռք բերեցի նորագույն գիտելիքներ գիտության հիմնարար, ինչպես նաև նոր ձևավորվող ուսումնասիրության

բնագավառներում։ Վերջինս որոշակի ոգևորություն տվեց հետագայում զարգացնելու և նորարար գաղափարներ առաջարկելու ուղղությամբ։

Էրասմուսյան կիսամյակը, ինչպես նշեցի, կարող է երբեմն անկանխատեսելի լինել։ Բոլորիս հայտնի համավարակը չշրջանցեց նաև միջազգային ուսանողներին, ովքեր նպատակադրված էին ունենալ խելահեղ միջազգային փորձ, հաճույքով հաճախել դասերին, ձեռք բերել ընկերներ աշխարհի ամենատարբեր անկյուններից, գնալ ճամփորդությունների, ծանոթանալ հյուրընկալող երկրի մշակույթին ու պատմությանը, բացահայտել նրա «գաղտնիքները»… Իհարկե, մեծամասնությունը իրականություն դարձավ ինձ համար. մեկից՝ մի քիչ շատ, մյուսից՝ մի քիչ քիչ։ Այնուամենայնիվ, ես արժևորում եմ այն ամենը, ինչ ինձ բաժին հասավ այս ծրագրից, որին ես շնորհակալ եմ։ Հետևապես, կցանկանայի քաջալերել Էրասմուսի ապագա մասնակիցներին արժևորել ամեն պահը՝ անկախ նրանից, թե ժամանակները դժվար են ու հուսալքող, կամ ամեն ինչ լավ է ընթանում։ Ամենից կարևոր է այն, որ պետք է գնալ ռիսկի, դեմ դիմաց դուրս գալ մարտահրավերների առջև. սա է լավագույն փորձի ու հաջողության բանալին։

Մերի Պետրոսյան

Հաշվապահական հաշվառման եվ աուդիտի ֆակուլտետ

Մագիստրատուրա 1-ին կուրս

Բիդգոշի տնտեսագիտական համալսարան (Լեհաստան)

Ողջույն: Ես Մերին եմ Տնտեսագիտական համալսարանի հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետից: Նախորդ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակը ուսանողների փոխանակման Էրազմուս+ ծրագրով սովորել եմ Լեհաստանում՝ Բիդգոշի տնտեսագիտական համալսարանում: Իրականում ամենաազդեցիկ ու դիպուկ բառերը բավարար չեն նկարագրելու համար այն տպավորությունները, որոնք հասցրել եմ ստանալ վերջին մի քանի ամսիների ընթացքում:

Միջազգային ընկերները, համալսարանական մթնոլորտը, մշակութային խառնաշփոթ, տիպիկ լեհական սառը ու կոշտ վերաբերմունք. սրանք բարդ, բայց միևնույն ժամանակ անչափ հետաքրքիր ու տպավորիչ առօրյայի միայն մի մասն էին: Ուսանողների փոխանակման ծրագրով արտասահմանյան բուհերում իրենց ուսումը շարունակած մասնակիցները ևս կփաստեն, որ այդ շրջանում մենք կատարում ենք նաև այսպես կոչված «դիվանագիտական փոքրիկ առաքելություն»՝ ներկայացնելով մեր երկիրը այլազգիներին՝ պատմությունից մինչև սովորույթներ, մշակույթից մինչև ազգային խոհանոց: Այդ շրջանում մեզնից յուրաքանչյուրը դառնում էր իր երկրի մանրակերտը՝ ամենադրական առումներով:

Ես առաջին հայ ուսանողն էի Բիդգոշի տնտեսագիտության համալսարանում, ուստի հասկանում էի, թե որքանով էր ավելանում պատասխանատվությունը մեր երկիրը առաջինը ներկայացնելու ինչպես համալսարանում՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմին, այնպես էլ համալսարանից դուրս՝ միջազգային ուսանողներին, և առհասարակ լեհ ժողովրդին:

Նախ և առաջ Էրազմուսը կրթական ծրագիր է, որի ընթացքում ես հասցրի ծանոթանալ լեհական կրթական մշակույթին, դասավանդման մեթոդներին, դասախոս-ուսանող անմիջական և մոտիվացնող հարաբերություններին: Համալսարանական կյանքը պարզապես անչափ հետաքրքիր էր և տարբեր՝ զերծ արտալսարանական կարծրացած դասախոսություններից ու քննական հարցաշարերից: Բացի բազմաթիվ կրթական առավելություններից Էրազմուսը նպաստում է նաև ուսանողի անձնական որակների զարգացմանը, աշխարհայացքի ընդարձակմանը, ինքնաճանաչմանն ու ինքնադրսևորմանը:

Համոզված եմ, որ ստացածս տպավորություններն ու անցկացրածս հրաշալի ժամանակը դեռ երկար են մնալու մտքումս:

Ռայա Հարությունյան

Ֆինանսահաշվային ֆակուլտետ, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ

Մագիստրատուրա, 1-ին կուրս

Կրակովի տնտեսագիտական համալսարան (Լեհաստան)

Ողջու՛յն: Ես Ռայան եմ՝ Գյումրիից: 2020 թվականը կարծում եմ բոլորիս համար եղավ տարբերվող, տարօրինակ, գուցե և բեկումնային տարի: Իմ պարագայում պատճառը միայն թագավարակը չէր: Հենց այս տարում ես ունեցա հնարավորություն Էրազմուս+ ծրագրի շրջանակներում կրթությունս մեկ կիսամյակով շարունակելու Կրակովում՝ 200.000 ուսանողների քաղաքում, որը հիմա արդեն վստահաբար կարող եմ ասել Լեհաստանի լավագույն և ամենագեղեցիկ քաղաքն է:

Իրականում արտասահմանում կրթությունս շարունակելու մասին վաղուց էի մտածում, իսկ երբ ընտրվեցի հենց այս ծրագրի մասնակից, հասկացա, որ կրկնակի հաջողակ եմ, քանի որ Կրակովում իմ ուսանողական կյանքը անցնելու էր երկրի լավագույն և խոշորագույն տնտեսագիտական համալսարանում:

Հիմա, երբ իմ էրազմուսյան փորձառությունը այլևս պատմություն է, կարող եմ ասել, որ այն իրոք, առանց որևէ չափազանցության կյանքի իրական դպրոց հանդիսացավ ինձ համար: Չնայած այն հանգամանքին, որ փորձառությանս 2 ամիսը անցկացրել եմ հիմնականում տանը, իսկ ուսումս գրեթե ամբողջությամբ օնլայն, այնուամենայնիվ այդ փաստը ևս մեզ չխանգարեց վայելել մեր էրազմուսյան յուրաքանչյուր օրը, բացահայտել նորը, ձեռք բերել ծանոթներ ողջ աշխարհից (նրանցից որոշները դարձել կյանքի իրական ընկերներ), զգալ տարաբնույթ էմոցիաներ, ճամփորդել, այցելել նոր երկրներ ու քաղաքներ (մանրակրկիտ կերպով պլանավորելով յուրաքանչյուր ճամփորդությունը), արկածային իրավիճակներում հայտնվել, ծանոթանալ նոր մշակույթի հետ՝ միևնույն ժամանակ ծանոթացնելով սեփական հայկական մշակույթի, արժեքների, հայի տեսակի հետ: Այս շարքը կարող եմ էլի շարունակել, բայց ուզում եմ անդրադառնալ նաև կրթությանս:

Չնայած դասերի օնլայն լինելի հանգամանքին, որը ծանրացնում էր աշխատանքը թե մեզ՝ ուսանողներիս, և թե դասախոսների համար, բայց մեր համալսարանի մասնագետները ոչ միայն իրենց ջանքերը չխնայեցին ամեն կերպ մեզ փոխանցելու նոր գիտելիքներ և կիսվել իրենց փորձառությամբ, այլ նաև պանդեմիայի ողջ ընթացքում ամեն կերպ հոգեպես քաջալերում էին մեզ: Ուզում եմ շնորհակալություն հայտնել Կրակովի տնտեսագիտական համալսարանին այս ամենի համար, և իհարկե ՀՊՏՀ-ին մեր երկիրն ու համալսարանը ներկայացնելու հնարավորությունը այս անգամ ինձ վստահելու համար:

Բացի ամենից Էրազմուսը ոչ միայն ինձ, այլ նաև վստահ եմ բոլոր էրազմուսականների համար առաջին հերթին անձնական կարողությունները զարգացնելու հրաշալի հնարավրություն էր: Հիմա ես ավելի ինքնուրույն եմ, առավել պատպատասխանատու եմ արարքներիս համար, ունակ եմ կշռադատված որոշումներ կայացնել, առավել հեշտ եմ համագործակցում թիմային

աշխատանքներում, սովորել եմ կիսել հաջողությունը թիմիս անդամների հետ, հիմա ես ունեմ ավելի շատ մասնագիտական գիտելիքներ ու ավելի լավ եմ խոսում անգլերեն :)

Մի խոսքով ինքներդ արդեն հասկացաք, որ Էրասմուսը հնարավորություն է, որից պետք է կյանքում գոնե մի անգամ օգտվել: Իմ պարագայում հուսով եմ այն միակը չի լինի: Ինչպես էրազմուսականների կարգախոսն է ասում. «Մեկ անգամ Էրասմուս, ընդմիշտ Էրազմուս»:

Սոնա Ոսկանյան

Հաշվապահական հաշվառման եվ աուդիտի ֆակուլտետ

Մագիստրատուրա 1-ին կուրս

Բիալիստոկի տեխնոլոգիական համալսարան (Լեհաստան)

Հարգելի ընթերցող,

Վստահ եմ, որ մեզանից յուրաքանչյուրն էլ կյանքում գոնե մեկ անգամ մտածել կամ երազել է արտերկրում սովորելու մասին: Ես նույնպես, ուղղակի ի տարբերություն շատերի ես չսահմանափակվեցի միայն երազելով, ես հասա նպատակիս:

Երբ դեկտեմբեր ամսին պարզ դարձավ, որ հաջորդ վեց ամսվա ընթացքում պետք է ուսումս շարունակեմ Բիալիստոկի տեխնոլոգիական համալսարանում, հասկանում էի, որ մեղմ ասած հեշտ չի լինելու ՝ նոր ընկերներ, նոր ծանոթություններ, օտար միջավայր, մշակութային սթրես և այլ դժվարություններ։ Սակայն չէի պատկերացնում, որ իմ էրազմուսյան պատմությունը հիշվելու է նաև այլոց կողմից, ովքեր ուղղակի տեղյակ էին ծրագրից։ Մարտ ամսից սկսած աշխարհում տիրող արտակարգ իրավիճակի պատճառով իմ պլաններն ու սպասելիքները գրեթե ամբողջությամբ ձախողվեցին, էրազմուսյան հաջողված պատմություն ունենալն այլևս կասկածի տակ էր։ Բայց ամեն ինչ այդքան էլ վատ չէր։Հենց այս ընթացքում սկսեցի ավելի լավ ճանաչել իմ ընկերներին, ինչու՞ չէ նաև ինքս ինձ և ձեռք բերել նոր հմտություններ։

Իհարկե, ընկերներիցս յուրաքանչյուրն ուներ իրեն բնորոշ յուրահատկություններ, սակայն նրանք ունեին մեկ ընդհանրություն՝ կրոն։ Նրանք մուսուլման էին։ Ինձ համար ամենամեծ մարտահրավերներից էր Ռամադանը։ Ռամադանը իսլամական օրացույցի իններորդ ամիսն է։ Այն համարվում է մուսուլման աշխարհի պահքի ամիսը, որով նրանք հիշատակում են Մուհամմադ մարգարեի առաջին հայտնությունը։ Ըստ մուսուլմանական օրացույցի՝ պահքը մեկ ամիս է տևում։ Ամբողջ ամսվա ընթացքում հավատացյալները (բացառությամբ ծերերի եւ երեխաների) օրվա ցերեկային ժամերին լիովին հրաժարվում են սնվելուց եւ խմելուց։ Ապրելով նման միջավայրում՝ ես նույնպես որոշեցի հետևել բոլոր ավանդույթներին, որպեսզի ավելի լավ հասկանամ նրանց ապրելակերպն ու մշակույթը։ Այդ ամսվա ընթացքում, ես կարծես Թունիսում, Ալժիրում կամ Թուրքիայում լինեի։ Չեմ կարող չնշել, որ նրանք նույնպես բավականին հետաքրքրված էին թե՛ հայկական մշակույթով, թե՛ հայկական խոհանոցով։ Միասին նշել ենք Սուրբ Զատիկը։ Ինձնից պակաս ոգևորված չէին նաև ընկերներս։ Հենց միմյանց մշակույթներին ծանոթանալն օգնեց մեզ դառնալ ընտանիք։

Ինչ վերաբերում է դասերին, նախքան գալս ես մտածում էի, որ բավականին ծանրաբեռնված եմ լինելու։ Բայց, անկասկած, կարանտինյան թոհուբոհից անմասն չմնացին նաև դասերը։ Դրանք հեռավար էին։ Նույնիսկ կային դասախոսներ, որոնց ես անգամ չեմ տեսել իրականում։ Իհարկե, շատ եմ ափսոսում, քանի որ նման մասնագետներից, իսկապես, շատ բան կարելի էր սովորել։

Ինձ համար էրազմուսը ճամփորդելու հիանալի հնարավորություն է։ Չնայած աշխարհում տիրող իրավիճակին, որի արդյունքում մենք չկարողացանք ճամփորդել մոտ 4 ամիս, կարող եմ ասել, որ այստեղ ևս ես գտել էի լուծումը։ Կարանտինից առաջ ես բացահայտել էի 2 գեղեցիկ քաղաք՝ Բուդապեշտն ու Բրատիսլավան։ Բացահայտումների շարքը շարունակվեց հուլիսին։ Այս անգամ մեզ իրենց գեղեցկությամբ գրավել էին Վարշավան, Կրակովը, Վրոցլավը և այլ եվրոպական քաղաքներ։ Վստահ եմ, որ սա դեռ սկիզբն է։

Ուզում եմ նշել, որ չնայած դժվարություններին, ես անմոռանալի էրազմուսյան պատմություն եմ ունեցել։ Եթե հնարավորություն ունենամ նորից սովորելու, ապա առանց մեկ վայրկյան վարանելու կդիմեմ։ Բոլորին խորհուրդ եմ տալիս օգտվել իրենց տրված հնարավորությունից։

Եվ վերջում,ահա մի քանի խորհուրդ,որ վստահ եմ կօգնեն ձեզ.

- Համարձակ եղի՛ր։ Երբեք չվախենաս առաջին քայլն անելուց։
- Ցանկացած դժվարություն մի նոր փորձություն է, որ պիտի հաղթահարես։
- Փորձի՛ր և բացահայտի՛ր ինչքան հնարավոր է շատ նոր բաներ։
- Ուղղակի վայելիր քո էրազմուսյան օրերը։

Լիլիթ Եսայան

Կառավարման ֆակուլտետ

Բակալավր 2-րդ կուրս

Ստեֆան սել Մարե Սուչավա (Ռումինիա)

Ես Լիլիթն եմ, կառավարման ֆակուլտետի ուսանող, ով մեկ տարի առաջ վստահեցնում էր, որ անգամ մեկ օր չի կարող անցկացնել օտար երկրում առանց ընտանիքի ու ընկերների։

Իմ Էրազմուսյան փորձությունն անցկացրել եմ Ռումինիայում, սովորել՝ Սուչավայի Շտեֆան չել Մարե համալսարանում։ Covid-19-ի առաջացրած խնդիրերի հետևանքով համալսարանը ստիպված եղավ ուսումը կազմակերպել օնլայն հարթակում։ Սակայն հմուտ և պրոֆեսիոնալ դասախոսները արեցին առավելագույնը նյութի արդյունավետ տրամադրման և յուրացման

համար։ Գտնվելով Ռումինիայում՝ հայտնվեցի Էրազմուսյան յուրահատուկ մթնոլորտում, որտեղ բոլոր ազգերի միջև տիրում է ընկերությունը, հոգատարությունը և ջերմությունը։ Ձեռք բերեցի բազմաթիվ ընկերներ, ովքեր իմ պատմությունը դարձրին անմոռանալի։ Տեղաշարժման սահմանափակումները մեզ ավելի մտերմացրին, իսկ կենցաղը ուղեկցվում էր բազմաթիվ հետաքրքիր և հիշարժան պահերով։ Միասին ապրեցինք անմոռանալի պահեր՝ հիասթափություններից մինչև ամենազվարճալի հիշողությունները։ Իսկ քննությունների ավարտից հետո ճամփորդեցինք արդեն հարազատ դարձած Ռումինիայով և բացահայտեցինք նորովի։

Ահա և վերջ։ Եկել է հրաժեշտի պահը... արցունքներ... գրկախառնություններ... կրկին հանդիպելու անսահման մեծ ցանկություն։ Մեքենան արդեն սպասում է. գոնե մի փոքր ուշանար։ Մեքենայից նայում ես վերջին անգամ և տեսնում ՝ արցունքն աչքերին կանգնած է անգամ ամենասառը թվացող ընկերդ։Մնաս բարո՛վ, Սուչա'վա ։

Ես Լիլիթն եմ, կառավարման ֆակուլտետի ուսանող, ով այժմ կարծում է, որ ամեն ինչ հնարավոր է։

Մելինե Արշակյան

Ֆինանսական ֆակուլտետ

Բակալավր 3-րդ կուրս

Ցվիկաուի կիրառական գիտությունների համալսարան (Գերմանիա)

Ողջույն: Ես Մելինեն եմ՝ ՀՊՏՀ 3-րդ կուրսի ուսանողուհի: Այժմ սովորում եմ Գերմանիայում՝ Ցվիկաոյի կիրառական գիտությունների համալսարանում:

Գերմանիան միշտ եղել է իմ միակ նպատակակետը. թերևս այդ է պատճառը, որ ձեզ այժմ այստեղից եմ գրում:

Ցվիկաո քաղաքը, որտեղ գրեթե 6 ամիս ապրում եմ, փոքրիկ, անչափ գեղեցիկ և պայծառ քաղաք է ՝ Գերմանիային բնորոշ հսկայական կոթողների և բնության ներդաշնակ միաձուլում: Կարանտինի միակ առավելությունը երևի գերմանական հենց այս քաղաքը լիովին բացահայտելն էր՝ նախքան մյուսներին անցնելը:

Իհարկե, համաճարակի պատճառով սպասելիքներս և իրականությունը մի փոքր տարբերվեցին միմյանցից, սակայն կարծում եմ ՝ հենց այսպիսի մարտահրավերներն են օգնում ինքնադրսևորվել և ճանաչել ինքդ քեզ:

Առանց երկար-բարակ շարադրելու, պարզապես ցանկանում եմ ասել, որ իմ հաջողության պատմության հիմքում ընկած են նպատակներիս հասելու իմ համառությունը, նոր փոփոխություններ ընդունելու իմ պատրաստակամությունը և դրական վերաբերմունքս ցանկացած դժվարության:

Իսկ մնացած ուսանողներին հաստատապես խորհուրդ եմ տալիս մասնակցել ծրագրին՝ համոզվելու, թե որքան գիտելիքեր և փորձառություն կարող են ստանալ այս կարճ ժամանակահատվածում, և թե որքան հագեցած և գունեղ կարող են անցնել կյանքի վեց ամիսները:

Ալինա Համբարձումյան

Հաշվապահական հաշվառման եվ աուդիտի ֆակուլտետ

Բակալավր 2-րդ կուրս

Ցվիկաուի կիրառական գիտությունների համալսարան (Գերմանիա)

Ողջու՛յն։ Ես Ալինան եմ՝ Տնտեսագիտական համալսարանի 2-րդ կուրսի ուսանողուհի, ում բախտ է վիճակվել 1 կիսամյակ ուսումնառությունը շարունակել Գերմանիայում՝ Ցվիկաոյի կիրառական գիտությունների համալսարանում։ Արտերկրում սովորելը դեռ մանկուց անհասանելի երազանք էր թվում, սակայն ինչպես ասում են երազանքները իրականանալու սովորություն ունեն։ Այն օրվանից, երբ ստացել էի հաջողակների ցանկում ընդգրկված լինելու

նամակը, մեծ եռանդով և ոգևորությամբ ցանկանում էի օր առաջ բացահայտել Գերմանիան և ինչու՞ չէ նաև ինքս ինձ։

Ապրել միայնակ օտար երկրում, ձեռք բերել ընկերներ աշխարհի տարբեր ծայրերից, ծանոթանալ նրանց մշակույթի հետ և յուրաքանչյուր օր բացահայտել ինքդ քեզ և աշխարհը։ Էրազմուսը կյանքի հիանալի փորձ է՝ հագեցած նոր հնարավորություններով և բազում հետաքրքիր արկածներով։

Ինչ խոսք, պանդեմիան և կարանտինային պայմաններն խափանեցին շատ ծրագրեր բայց և Էրազմուսն ավելի հիշարժան և հետաքրքիր դարձրին։ Փակ սահմանները համախմբեցին Էրազմուսի ուսանողներին և դարձրին մի մեծ, ամուր ընտանիք՝ բազմամշակութ և բազմալեզու։

Գիտեմ, որ հեշտ չէ արտերկրում ուսանելու որոշում կայացնել, բայց յուրաքանչյուրին խորհուրդ կտամ կյանքում գոնե մեկ անգամ ռիսկի դիմել և վայելել Էրազմուսյան օրերը։

Արևիկ Միքայելյան

Ֆինանսական ֆակուլտետ

Մագիստրատուրա 1-ին կուրս

Ցվիկաուի կիրառական գիտությունների համալսարան (Գերմանիա)

Ողջույն, ես Արևիկն եմ, կամ ինչպես գերմանացիներն են ինձ դիմում «Աղեվիկը», բայց որպեսզի շատ չտանջեմ նրանց ընտրել ենք «Sunny» տարբերակը: Երբ իմացա, որ պետք է պատմեմ իմ Էրազմուսյան հաջողության պատմությունը, փորձեցի գտնել այդ պատմության արմատները: Անկեղծ ասած, դրանք շատ խորն են: Դեռևս դպրոցական տարիներից միշտ սրտիս փոքրիկ անկյունում մի մեծ երազանք եմ ունեցել՝ սովորել Գերմանիայում: Երբ ընդունվեցի բուհ, սկսեցի փնտրել երազանքիս ճանապարհը, բայց ամեն ինչ այդքան էլ հեշտ

չէր. Գերմանիան չկար Էրազմուսյան ուղությունների ցանկում: Ավարտական կուրսում տեսա հայտարարություն. ՀՊՏՀ ուսանողները ուսումնառությունը կարող են շարունակել Գերմանիայում: Փաստորեն, կյանքը չար կատակ խաղաց ինձ հետ, քանի որ ես չէի կարող մասնակցել մրցույթին: Բայց կարող էի մասնակցել հաջորդ տարի, արդեն որպես մագիստրատուրայի ուսանող: Եվ այսօր ես իմ Էրազմուսյան պատմությունը գրում եմ հենց Գերմանիայից: Առհասարակ զգույշ եղեք ձեր երազանքների հետ, նրանք կատարվելու հատկություն ունեն:

Իմ պատմությունը նման չեղավ դասական Էրազմուսյան պատմություններին: Երբ եկա այստեղ եվրոպական գունավոր քաղաքը շատ ջերմ ընդունեց ինձ: Բայց այն ինչ եղավ հետո անհնար էր պատկերացնել անգամ երազում: Համաճարակ, փակ սահմաններ, դատարկ փողոցներ, քաղաքը լռեց… Վստահաբար սա այն չէր ինչին սպասում էի: Դասերը կազմակերպվեցին հեռավար, ու երևի միակ բանը, որն ինձ ցավեցրեց այն էր, որ այդպես էլ չկարողացա լսարանում ինձ զգալ միջազգային ուսանող: Բայց սա չխանգարեց ստանալ այն գիտելիքները, փորձը, որը կարծում եմ ինձ օգնելու է հասնել մասնագիտական հաջողությունների: Այստեղ ես ճանաչեցի ինձ և սովորեցի լինել առավել ինքնուրույն, քան երբևէ: Բայց իմ լավագույն ձեռքբերումը գերմանական միջավայրում դա ժամանակի արժևորումն էր: Կարևորել, գնահատել և արդյունավետ օգտագործել ժամանակի ամեն պահը: Ահա սա է ընկած յուրաքանչյուր հաջողության պատմության հիմքում: Եվ եթե այս պատմությունը կարդում են ուսանողներ, որոնք ևս ցանկանում են կրթություն ստանալ արտերկրում և ունենալ իրենց Էրազմուսյան հաջողության պատմությունը, ապա որպես ավագ ընկերոջ խորհուրդ կասեմ, որ գնան իրենց երազանքի հետևից, և այդ ճանապարհին չվատնեն ամենաթանկ և չվերականգնվող ռեսուրսը՝ ժամանակը: Հետո կանեմ, վաղը կանեմ, հենց սա է մարդուն իջեցնում ներքև: Հետոն հիմա է, իսկ հիման ձեր հնարավորությունն է:

Ինչ վերաբերվում է ինձ, ապա իմ երազանքից մի մասնիկ դեռևս իմ սրտում է: Եվ ես վստահ եմ, որ կվերադառնամ Գերմանիա և կզգամ համալսարանական շունչը: Գերմանիա՛, սպասի՛ր ինձ, ես անպայման կվերադառնամ…

Դավիթ Ասոյան

Ֆինանսական ֆակուլտետ

Մագիստրատուրա 1-ին կուրս

Ցվիկաուի կիրառական գիտությունների համալսարան (Գերմանիա)

Շատերս համալսարանում սովորելու ընթացքում մեր ավագ ընկերներից լսում ենք, որ համալսարանում անցկացրած տարիները երիտասարդական կյանքի լավագույն տարիներն են և պետք է լավագույնս վայելել այդ տարիները։ Բակալավրիատում սովորելու ընթացքում երբեմն չենք հասկանում այդ խոսքերի իմաստը։

Միայն ավարտելուց հետո սկսեցի լիարժեք գիտակցել, թե իրոք ինչքա՜ն շատ բան եմ սովորել համալսարանում, ինչքա՜ն շատ բան է այն ինձ տվել և ինչքա՜ն հիշողություններ ունեմ նրա հետ կապված։ Դրա համար, առանց առանձնապես երկար մտածելու, որոշեցի, որ ուզում եմ հնարավորինս երկարացնեմ երիտասարդական լավագույն տարիներս, և ընդունվեցի մագիստատուրա։

Ընդամենը մի քանի ամիս անց մասնակցեցի Էրազմուս+ փոխանակման ծրագրի մրցույթին, և ինձ ընձեռվեց մեկ կիսամյակ Գերմանիայում Ցվիկաուի կիրառական գիտությունների համալսարանում սովորելու հնարավորություն։

Չեմ կարող թաքցնել, որ Գերմանիայի մասին ակնկալիքներն ու առաջին տպավորություններս այդքան էլ չհամընկան, քանի որ այնտեղ ժամանեցի հենց այն ժամանակ, երբ համավարակի պատճառով բոլոր եվրոպական երկրները հերթով խստացնում էին սահմանափակումները։ Չնայած նրան, որ կիսամյակն ավարտվեց, բայց համալսարնի դասերն ամբողջովին անցկացվեցին առցանց, դա չխանգարեց, որ ստանամ նոր գիտելիքներ, ձեռք բերեմ մասնագիտական նոր հմտություններ, ծանոթանամ և շփվեմ պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ։

Չնայած ունեցածս առցանց հետաքրքիր դասախոսություններին, ինձ համար Էրազմուսի ամենակարևոր ձեռքբերումս նոր շփումները, ծանոթություններն ու ընկերներն էին։ Էրազմուսը հենց դրանով է առանձնահատուկ, որ այն հատում է բոլոր սահմանները, կոտրում բոլոր կածրատիպերը և թույլ տալիս երիտասարդներին ճանաչել միմյանց՝ անկախ ազգային պատկանելությունից, կրոնից, սեռից և տարիքից։

Էրազմուսը նաև հնարավորություն է տալիս առավել մոտիկից ծանոթանալ եվրոպական մշակույթին, թույլ է տալիս ապրել եվրոպական առօրյայով, որն էլ ինչ-որ չափով օգնում է հասկանալ եվրոպական տնտեսության որոշ առանձնահատկություններ։

Սա է պատճառը, որ էրազմուսյան կյանքը տևում է ինչպես ակնթարթ, բայց այդ ակնթարթը մնում է հիշողության մեջ ողջ կյանքում։



Նվարդ Մկրտչյան

Ֆինանսական ֆակուլտետ

Բակալավր 3-րդ կուրս

Ցենովի տնտեսագիտական ակադեմիա (Բուլղարիա)

…Եվ վերջապես եկավ երկար սպասված այդ պահը՝ լի հույզերով, մի տեսակ խորթ անհանգստությամբ, բայց և հոգին խանդավառող սպասումներով. մեկնելու էի Բուլղարիա՝ ուսումս մեկ կիսամյակով այնտեղ շարունակելու։ Ոգևորվածությանս չափ չկար, բայց դրա հետ մեկտեղ հոգիս պարուրվել էր անծանոթ զգացումներով՝ նոր միջավայր, տարբեր ազգեր, տարբեր մշակույթներ…։ Նոր բացահայտումների ու նոր ձեռքբերումների միտքը հրաժարվում էր մեկ վայրկյանով անգամ լքել ինձ։ Սիրտս հագել էր իր այդքան սիրելի վարդագույն շապիկը և չէր ուզում զգեստափոխվել, չէր ուզում հավատալ, որ իրականության ու երևակայականի

պայքարում հաղթանակը երբեմն շնորհվում է գորշ իրականությանը։ Ապագան լի էր ամենատարբեր խոստումներով։ Այն խոստացել էր լինել անմոռանալի...

Սակայն պատահեց ամենաանսպասելին։ Ընդամենը մի քանի օրում ինձ հարազատ դարձած միջավայրը գունազրկվեց։ Ասես մի անտեսանելի ձեռք քաղաքը վերածեց գորշ ու դատարկ տարածության։ Արդեն չկային մարդկանց ջերմ հայացքներն ու ուսանողների խանդավառ ժպիտները։ Համավարակի մասին լուրերը ստիպեցին մոռանալ այն քաղցր սպասումները, որ ունեինք Բուլղարիա ժամանելուց առաջ։ Ստիպված էինք առաջիկա ամիսները մեկուսանալ և դասերն անցկացնել օնլայն ռեժիմով։ Սակայն բոլորս էլ հոգու խորքում սպասում ու հավատում էինք, որ այս ամենը ժամանակավոր է, և մի օր կվերադառնանք մեր բնականոն կյանքին։ Եվ այդ պահը չուշացավ, շուտով լսեցինք երկար սպասված լուրը՝ վիրուսը նահանջում է։ Մենք հնարավորություն ստացանք ճամփորդելու և նոր արկածների, նոր բացահայտումների ետևից գնալու։ Քննությունները գերազանց հանձնելուց հետո սա լավագույն նվերն էր, որ կարող էինք ստանալ։

Բուլղարիայում անցկացրած 5 ամիսները տվեցին կյանքի կարևորագույն դասերը, սովորեցրին հաղթահարել անսպասելի դժվարությունները, գնահատել և վայելել ապրածդ ամեն վայրկյանը, և որ ամենակարևորն է՝ երբեք չկորցնել լավատեսությունն ու ապագայի հանդեպ հավատը։ Շնորհակալ եմ Էրազմուսին ինքս ինձ ավելի լավ ճանաչելու հնարավորություն տալու, աշխարհի տարբեր անկյուններից ընկերներ ձեռք բերելու և պարզապես այն քաղցր հիշողությունների համար, որոնք դեմքիս ժպիտ են նկարելու։



Քնարիկ Բրուտյան

Հաշվապահական հաշվառման եվ աուդիտի ֆակուլտետ

Բակալավր 3-րդ կուրս

Ցենովի տնտեսագիտական ակադեմիա (Բուլղարիա)

Ողջու՛յն, ես Քնարիկն եմ։Սովորում եմ ՀՊՏՀ-ի 3-րդ կուրսում։ Արտերկրում ուսանելը ինձ համար նպատակ էր դեռ մինչև ուսանող դառնալս։Նպատակս իրագործելու համար որոշեցի անպայման դիմել Էրազմուսին, և ստացվեց։Ուսումնառությանս 1 կիսամյակն անցկացրի Ցենովի տնտեսագիտական ակադեմիայում։

Մեկնելուցս կարճ ժամանակ անց սկսվեց COVID-19-ը։ Իհարկե, սկզբում բոլոր ուսանողները՝ այդ թվում նաև ես, խուճապի մեջ էինք և անհանգիստ, սակայն կարճ ժամանակ անց ամեն ինչ պատշաճ կերպով համակարգվեց։

Սահմանափակումների արդյունքում ուսուցումն իրականացվում էր առցանց։ Ե՛վ ուսանողները, և՛ դասախոսական անձնակազմը պատրաստակամ էին անել լավագույնը փորձի փոխանակումը և նոր գիտելիքների ստացումն ապահովելու համար։Որոշ ժամանակ անց, երբ իրավիճակը փոքր-ինչ մեղմվեց, հնարավորություն ունեցա ընկերներիս հետ ճանաչել հին ու նոր Բուլղարիան, ծանոթանալ մշակույթի, բնիկների և նրանց խառնվածքի հետ։

Էրազմուսի շնորհիվ դարձա ավելի ինքնուրույն, բացահայտեցի ինքս ինձ։ Բուլղարիայում անցկացրած կարճ ընթացքում հասցրի ձեռք բերել անմոռանալի հուշեր և հրաշալի ակնթարթներ ամբողջ կյանքի համար։Էրազմուսը լավագույնն է քեզ և՛ որպես մարդ, և՛ որպես մասնագետ բացահայտելու, կոփելու և արդիական դարձնելու հարցում։

Շնորհակալ եմ Էրազմուսին և ՀՊՏՀ միջազգային կապերի բաժնին նման հնարավորության համար։

Անի Հարությունյան

Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ

Մագիստրատուրա 1-ին կուրս

Միշկոլց համալսարան (Հունգարիա)

Ողջու՛յն, ես Անին եմ։ Բուհ ընդունվելու առաջին իսկ վայրկյանից երազում էի ուսումս արտերկրում շարունակել Էրազմուս+ ծրագրի շրջանակներում ու ոչ մի ջանք չէի խնայում երազանքիս հասնելու համար։ Եվ վերջապես այս տարի, հանձնելով բոլոր քննությունները, ինձ հնարավորություն ընձեռվեց ուսումս շարունակել Հունգարիայում Միշկոլց համալսարանում։ Դա իմ կյանքի ամենաանհավանական ու ամենագեղեցիկ, արկածներով ու սթրեսներով լի 4 ամիսներն էի, որոնք ինձ դարձրին ավելի համարձակ, ինքնուրույն ու ինքնավստահ։ Դե, ինչպես ասում են հաջողությունը խիզախներին է սիրում։

Միշկոլցը գողտրիկ, գեղեցիկ մի քաղաք էր, հինավուրց շենքերով ու հրաշալի, ես կասեի դրախտային բնությամբ: Շենքը, որտեղ բնակվում էինք համալսարանին կից էր, շրջապատված անտառով, իսկ ծառից ծառ թռչկոտող սկյուռիկներն ասես իմ մանկության հեքիաթից լինեին: Այնտեղ շատ ընկերներ ձեռք բերեցի, որոնց շնորհիվ ծանոթացա նաև նրանց բարքերին ու սովորույթներին: Սովորելուց բացի անգամ հասցրինք մի քիչ ճանապարհորդել մոտակա քաղաքներում: Այցելեցինք մայրաքաղաք Բուդապեշտ, հաճելի ժամանակ անցկացրինք Դանուբի ափին, եղանք նաև Վիեննայում բայց չարաբաստիկ կորոնավիրուսի պատճառով մեր բոլոր պլաններն ու նախատեսած ճանապարհորդությունները հօդս ցնդեցին: Երկրագունդը կարծես մի պահ քարացել էր, սակայն այս ամենը նպաստեց նրան, որ մենք ուսանողներով ավելի մտերմացանք ու դարձանք իսկական ընկերներ: Ինձ և ընկերուհուս նույնիսկ մեկուսացրին 14 օրով Վիեննայից Բուդապեշտ սահմանը հատելիս: Սկզբում ամեն ինչ տագնապալի էր թվում, բայց ամեն բան հաղթահարեցինք մեր այլազգի ընկերների շնորհիվ, որոնք քաջալերում էին մեզ՝ մեկուսացման մեջ գտնվողներիս և ամեն օր անուշեղեն ու մրգեր էին ուղարկում: Մեկուսացման ավարտին հաջորդեց իմ ծննդյան օրը, որն այնքան գեղեցիկ ու տպավորիչ էր, որ ես մի պահ հուզվել էի: Դա բացառիկ ու աննախադեպ ծննդյան մի տարեդարձ էր, որն ինձ կուղեկցի իմ ամբողջ կյանքում: Ու ամեն բան հանգուցալուծվեց այնժամ, երբ ես որոշեցի անակնալ մատուցել և առանց որևէ մեկին տեղյակ պահելու, բազում փորձություններ հաղթահարելով, չեղարկված չվերթների և փակ ճանապարհների պայմաններում 4 օր ու գիշեր ճանապարհ կտրելով վերադարձա Հայաստան:

Ես երբեք չեմ մոռանա իմ կյանքի այն 4 ամիսները, որոնք ինձ իմաստություն, խիզախություն ու ինքնավստահություն շնորհեցին, ինչպես նաև չեմ մոռանա տանեցիների այն զարմացած ու կարոտած աչքերը, երբ առավոտյան ժամը 5-ին թակեցի մեր տան դուռը...

Մարիաննա Թորոսյան

Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ

Բակալավր 3-րդ կուրս

Միշկոլց համալսարան (Հունգարիա)

Բարև ձեզ: Ես Մարիաննան եմ, Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետից: Կյանքիս անմոռանալի 4 ամիսն անց եմ կացրել Հունգարիայում: Սովորել եմ Միշկոլցի համալսարանում: Առաջին 1 ամիսը լի էր նոր էմոցիաներով: Նոր միջավայր, նոր մարդիկ, նոր սովորույթներ: Ամեն ինչ միանգամից անհավատալիորեն լավն էր թվում: Պահեր կային, որ ընդհանրապես չէի զգում, որ ուրիշ երկրում եմ, կարծես ողջ կյանքս հենց այնտեղ էի ապրել:

Քանի որ իմ Էրազմուսը համընկավ համաճարակի զարգացման ամենաթեժ շրջանի հետ, մենք հաջորդ 3 ամիսը անց ենք կացրել կարանտինային պայմաններում։ Ճիշտ է, սա կարդալուց հետո կմտածեք, որ անհաջողակ եմ, բայց ես ինձ ավելի քան հաջողակ եմ համարում։ 3 ամիս շարունակ ընտանիք դարձած ապրում էինք մեկ հարկի տակ։ Երբևէ այսպիսի մտերմություն Էրազմուսի ուսանողների միջև չէր առաջացել։ Մենք օր ու գիշեր անց ենք կացրել միասին՝ միասին սովորել, միասին բացահայտել ենք Հունգարիայի գեղատեսիլ վայրերն ու հուշարձանները, յուրացրել ենք միմյանց սովորույթներն ու մշակույթը։ Ես հիմա կարող եմ ասել, որ ցանկացած երկրում ունեմ հարազատ մարդ, ում իմ կյանքի ընթացքում գոնե մեկ անգամ կայցելեմ։

Հունգարիայում ուսանողական կյանքն ուրիշ է։ Ինչքանով որ հասցրեցի ճանաչել, այնտեղ մտքի ազատություն է տրված ուսանողին։ Որքան էլ որ ինձ դուր է գալիս հայկական կրթական համակարգը, այնուամենայնիվ կարելի է որոշ մոտեցումներ ընդօրինակել։

Թեպետ ես չայցելեցի շատ երկրներ՝ ունեցա անմոռանալի փորձ՝ հիասքանչ մարդկանց մասնակցությամբ։

Անչափ շնորհակալ եմ ՀՊՏՀ-ին ընդձեռնված հնարավորության համար։

Köszönöm (Շնորհակալություն)

Սելեստա Բաղդասարյան

Ֆինանսական ֆակուլտետ

Բակալավր 3-րդ կուրս

Օսիյեկի համալսարան (Խորվաթիա)

ԱՆՀՆԱՐԻՆ թվացող ցանակացած երազանք, կարող է դառնալ մեր ապագայի իրականությունը, քանի որ անհնարինության գաղափարը միայն մեր գլխում է. հաղթահարելով այդ բարիերը՝ անհնարինը կդարձնենք հնարավոր:

Մանկությանս անհնարին թվացող երազանքը՝ արտասահմանում սովորելը, իրականություն դարձավ այս տարի՝ Էրազմուս+ ծրագրի շնորհիվ: Գլխումս մեծ ծրագրեր կազմած ժամանեցի հեքիաթային գեղեցկություն ունեցող Խորվաթիա: Առաջին օրվանից սկսած ծրագրերս ինքնըստինքյան իրագործվում էին: Ամեն օր ծանոթանում էի աշխարհի տարբեր ծայրերից

ժամանած մարդկանց հետ, քննարկում էինք մշակութային տարբերություններն ու այդ ահռելի տարբերությունների օվկիանոսում գտնում էինք բազմաթիվ նմանություններ, որոնք օր օրի ավելի էին մտերմացնում մեզ: Առաջին շաբաթվա ընթացքում ծանոթացա դասախոսների հետ և մեծ ոգրորվածությամբ սպասում էի մեր հաջորդ հանդիպմանը: Սակայն... Ինչպես ասում են կյանքը լի է անակնկալներով և նրան չեն էլ հետաքրքրում մեր պլանները. կորոնավիրուսային համաճարակով պայմանավորված բոլոր դասընթացները տեղափոխվեցին օնլայն հարթակ, իսկ ամենասպասված կրթական ու ժամանցային միջոցառումները չեղարկվեցին: Այս փոփոխությունները սկզբում անսովոր էին, հետո ամեն ինչ կարգավորվեց: Դասընթացներից մեկի ժամանակ յուրաքանչյուրս պետք է ներկայացնեինք որևէ թեմա, որը հետաքրքիր կլիներ և կգրավեր դիմացինին: Դե ինչ, սա հիանալի հնարավորություն էր աշխարհի ամենահրաշալի երկիրի՝ Հայաստանիս մասին խոսելու համար: Ելույթս ավարտելուց հետո լարված սպասում էի դասախոսի արձագանքին, քանի որ ինձ համար շատ կարևոր էր իմ երկիրը ներկայացնել այնպես, որ առանց տեսնելու սիրահարվեին նրան: Դասախոսը մի քանի հարց տվեց, որից հետո ասաց, որ իր ճամփորդության հաջորդ երկիրը անպայման Հայաստանն է լինելու, և խորհուրդ տվեց ուսանողներին նույնպես գնալ և տեսնել այդ հրաշք երկիրը:

Ամիսներ շարունակ մասնակցելով օնլայն դասընթացների՝ ես ձեռք բերեցի պրակտիկ և արժեքավոր գիտելիքներ:(Վստահ եմ ՝ դրանք ապագայում կնպաստեն իմ մասնագիտական աճին ու զարգացմանը:) Այս կարճ ժամանակահատվածը դարձավ իմ ուսանողական կյանքի ամենահիշարժան, տպավորիչ և անմոռանալի մասը: Կարծում եմ Էրազմուսը հիանալի հնարավորություն է ինքդ քեզ ճանաչելու և աշխարհը նորովի ընկալելու համար: Ի դեպ, Էրազմուս + ծրագրի անբաժանելի մասն են կազմում ճամփորդությունները: Չնայած աշխարհում տիրող իրավիճակին՝ վերջին ամիսներին մենք նույնպես կարողացանք ճամփորդել:

Այսպիսով, համաճարակը մի փոքր փոխեց իմ պատկերացրած էրազմուսյան պատմությունն ու պատճառ հանդիսացավ նոր ձևաչափով Էրազմուսյան պատմությունների կերտման համար, որը լի էր բազմաթիվ արկածներով և անակնկալներով:

Սյուզաննա Մանվելյան

Հաշվապահական հաշվառման եվ աուդիտի ֆակուլտետ

Բակալավր 3-րդ կուրս

Օսիյեկի համալսարան (Խորվաթիա)

Ողջու՛յն: Ես Սյուզաննան եմ՝ ՀՊՏՀ-ի 3-րդ կուրսի ուսանող, ում հնարավորություն ընձեռվեց շարունակելու ուսումը Խորվաթիայի ամենականաչազարդ քաղաքներից մեկում՝ Օսիյեկում:

Արտերկրում սովորելը դեռևս մանկուց եղել է երազանքներիցս մեկը, սակայն վերջինիս հետ կապված որոշման կայացումը այնքան էլ հեշտ չէր:Նոր միջավայրում սովորելու հնարավորությունը, և միաժամանակ այդ նոր միջավայրից եկող դժվարությունների, լեզվական ու մշակութային տարբերությունների մասին մտքերը անընդհատ վերլուծության էին ենթարկվում ուղեղումս: Երևի թե հենց այդ մտքերի և իմ անպատրաստ լինելու արդյունքում էր, որ հաջողություն չունեցա 2-րդ կուրսում, սակայն, և որի արդյունքում էլ ձևավորվեց այն մեծ մոտիվացիան, ինչն էլ ինձ օգնեց 3-րդ կուրսում: Եվ ահա արդեն 1 տարի

անց՝ յուրաքանչյուր օր Էրազմուսը մտքումս արթնանալուց հետո, նպատակս այլևս իրականություն է, սակայն այս անգամ ես արդեն պատրաստ եմ: Օսիյեկի համալսարանի հետ համագործակցությունը նոր էր, և դա էլ. ավելի էր մեծացնում պատասխանատվությունը, քանի որ մենք Հայաստանը ներկայացնող առաջին ուսանողներն էինք, և ցանկություն կար լինելու այն կապը, որը կնպաստեր այս 2 համալսարանների համագործակցության ընդլայնմանը: Էրազմուսը միայն կրթության մասին չէ: Այն որոշումներ կայացնելու և դրանց համար պատասխանատու լինելու, ինքնուրույն դառնալու,բազմաթիվ հնարավորությունների, բայց միաժամանակ նաև ոչ քիչ դժվարությունների մասին է: Հենց այստեղ է, որ դու բացահայտում ես ինքդ քեզ, ձեռք բերում նոր ընկերներ, ծանոթանում նրանց մշակույթին, հասցնում ես սովորել նոր լեզուներ,ապրել և տեսնել այնքան, որքանի մասին պատկերացնել անգամ չէիր կարող, և այն դառնում է շարժիչ ուժ նոր նպատակների համար: Այս տարի Էրազմուսյան ուսանողները «դասական» դժվարություններից զատ ունեցան մի շարք այլ բազմաթիվ դժվարություններ՝ կորոնա-կարանտին անվանումը կրող:

Դասերը տեղափոխվեցին օնլայն հարթակ, չեղարկվեցին համալսարանական և ESN-յան բոլոր միջոցառումները, և թվում է, թե մենք մենակ ենք հայտնվել օտար երկրում: Բայց գիտեք, այդպես չէ: Հենց Օսիյեկում ստեղծված Էրազմուսյան ընտանիքն էր, ում հետ միասին մենք հաղթահարցինք այդ դժվար օրերը և ստեղծեցինք մեր յուրօրինակ էրազմուսյան կյանքը:

Շնորհակալ եմ էրազմուս ծրագրին այս հիանալի կիսամյակի համար, որը ինձ տվեց մեծ փորձ ու հրաշալի հիշողություններ: